ԵԴ1/0591/01/24
(ՀԿԴ/0049/01/23)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17 ապրիլի 2024 թվական ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ուսումնասիրելով թիվ ԵԴ1/0591/01/24 (ՀԿԴ/0049/01/23) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 2-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2023 թվականի ապրիլի 10-ին Հակակոռուպցիոն դատարանում ստացվել է Վարդգես Հայկի Չրիկյանի վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և Լիա Ռուստամի Չրիկյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ 69108023 (ՀԿԴ/0049/01/23) քրեական վարույթը:

1.1. Հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի ապրիլի 14-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0049/01/23 քրեական վարույթը ստանձնելու և 2023 թվականի ապրիլի 20-ին նախնական դատալսումներ նշանակելու մասին:

1.2. Հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի օգոստոսի 14-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0049/01/23 քրեական վարույթով հիմնական դատալսումներ նշանակելու մասին:

1.3. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի մարտի 16-ին՝ հիմնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի ապրիլի 2-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/0591/01/24 (ՀԿԴ/0049/01/23) քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի ապրիլի 8-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. 2023 թվականի մարտի 30-ի որոշմամբ Վարդգես Հայկի Չրիկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 190-րդ հոդվածի հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ /հեգեներգործուն/նյութերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» թիվ 270-Ն որոշման պահանջները, թմրամիջոցների ապօրինի իրացմամբ զբաղվելու նպատակով 2019 թվականի նոյեմբերից համացանցի «Telegram» հեռահաղորդակցման հավելվածում ստեղծել և կառավարել է «Shoko.178», «Shoko 178» և գրեթե նույնանուն այլ առցանց խանութ-հարթակներ, դրանցում որպես*

վաճառվող թմրամիջոցների համար գումարի ստացման վճարային գործիք տեղադրել է այլ անձանց անուններով գրանցված, սակայն իր կողմից կառավարվող էլեկտրոնային դրամապանակների վերաբերյալ տեղեկատվություն և 2019-2021թթ.. ընթացքում նշված խանութ հարթակների միջոցով տարբեր անձանց ապօրինի իրացրել է առանձնապես խոշոր չափերով՝ առնվազն 162 գրամ «MDMB-2201 (5F-MDMB-PICA)» տեսակի թմրամիջոց և իրացման նպատակով ապօրինի շրջանառել է 0,2 գրամ «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց:

Թմրամիջոցների իրացումից ստացված առանձնապես խոշոր չափերով ֆինանսական միջոցների՝ 53.479.443 ՀՀ դրամի, հանցավոր ծագումը, դրանց իրական բնույթը թաքցնելու, հանցավոր ճանապարհով ստացված ֆինանսական միջոցների տեղաշարժն ու տեղաբաշխումը քողարկելու, ստացված դրամական միջոցներին օրինական տեսք հաղորդելու նպատակով նշված գումարները փոխանցվել են տարբեր անձանց անուններով գրանցված, սակայն Վարդգես և Լիա Զրիկյանների կողմից փաստացի կառավարվող ինչպես օտարերկրյա, այնպես էլ ՀՀ-ում գրանցված տարատեսակ էլեկտրոնային դրամապանակներին, որից հետո նույն եղանակով դրանք փոխանցվել են Վարդգես և Լիա Զրիկյանների էլեկտրոնային դրամապանակներին, ինչպես նաև կանխիկացվել կամ այլ կերպ տնօրինվել է Վարդգես Զրիկյանի կողմից:

Վարդգես Զրիկյանն ապահովել է, որ վերը նշված առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներն առանձնացվեն ըստ քաշերի, փաթեթավորվեն և նախապես տեղադրվեն Երևան քաղաքում գտնվող թաքստոցներում, որից հետո թմրամիջոցների գտնվելու վայրերը լուսանկարահանվել են, ծրագրային հավելվածի միջոցով նշվել են դրանց գտնվելու վայրերի աշխարհագրական կոորդինատները և ուղարկվել Վարդգես Զրիկյանի կողմից կառավարվող տելեգրամյան «Shoko.178», «Shoko 178» և գրեթե նույնանուն առցանց այլ խանութ-հարթակների միջոցով թմրամիջոց ձեռք բերելու ցանկություն հայտնած, թմրամիջոցների արժեքի և ձեռք բերման պայմանների շուրջ նամակագրություններ վարած անձանց, որոնց հետ համաձայնության գալուց հետո թմրամիջոցի համապատասխան չափաբաժնի արժեքը կազմող գումարը պահանջվել է փոխանցել Վարդգես Զրիկյանի կողմից ստեղծված և կառավարվող «Qiwi» համակարգի +79876607604 համարի

էլեկտրոնային դրամապանակին կամ Վարդգես Զրիկյանի և նրա կնոջ՝ Լիա Զրիկյանի, ինչպես նաև նրանց հարևան Վիգեն Հովհաննիսյանի անվամբ գրանցված, սակայն փաստացի Վարդգես Զրիկյանի կողմից կառավարվող «Իդրամ» վճարահաշվարկային համակարգում բացված էլեկտրոնային դրամապանակներին: Վարդգես Զրիկյանի հաշվին գումարի մուտքագրման փաստը հաստատող անդորրագրի լուսանկարները գնորդների կողմից փոխանցվելուց հետո նրանց է ուղարկվել արդեն իսկ Երևան քաղաքում գտնվող թաքստոցներում նախապես տեղադրված «MDMB-2201 (5F-MDMB-PICA)» տեսակի թմրամիջոցների տեղակայման լուսանկարները՝ ճշգրիտ աշխարհագրական կոորդինատներով: Նշված եղանակով Վարդգես Զրիկյանի կողմից առանձնապես խոշոր չափերով՝ առնվազն 162 գրամ «MDMB-2201 (5F-MDMB-PICA)» տեսակի թմրամիջոց է ապօրինի իրացվել Նվեր Հարությունյանին, Հրաչ Մկրտիչյանին, Մանաս Մկրտչյանին, Գնել Ալոյանին, Արսեն Գրիգորյանին, Հարություն Գրիգորյանին, Սարգիս Սահակյանին, Սոսի Թարխանյանին, Սերիկ Փանոսյանին, Ռոբերտ Մարությանին, Վաղինակ Պետրոսյանին, Ջիվան Շահվերդյանին և Էդգար Գրիգորյանին:

Նշված անձանցից Նվեր Հարությունյանին և Հրաչ Մկրտիչյանին 2019թ. դեկտեմբերի 11-ին և 12-ին Վարդգես Զրիկյանն ապօրինի կերպով իրացրել է նրանց կողմից պատվիրված «MDMB-2201 (5F-MDMB-PICA)» տեսակի թմրամիջոցի 2 փաթեթ, որից 1 փաթեթն ամբողջությամբ օգտագործել են, իսկ երկրորդ փաթեթում առկա թմրամիջոցի մի մասն օգտագործելուց հետո մնացած 0,504 գրամի «5F-MDMB-PICA» տեսակի թմրամիջոցը Նվեր Հարությունյանը ապօրինի պահել է իր կողմից շահագործվող «Լադա Պրիորա» մակնիշի 36 QU 383 հաշվառման համարանիշի ավտոմեքենայում, ինչն էլ հայտնաբերվել է ավտոմեքենայի խուզարկությամբ:

Բացի այդ, 2021 թվականի հոկտեմբերի 7-ին ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության աշխատակիցները Երևան քաղաքի Շիրակի փողոցի 2 հասցեի մոտակայքում պարզաբանումներ կատարելու նպատակով մոտեցել են «Honda» մակնիշի 36 MS 990 համարանիշի ավտոմեքենային, որի վարորդ Վարդգես Զրիկյանի հետ ունեցած խոսակցության ընթացքում վերջինս իր ձեռքին եղած դրամապանակից հանել և նետել է ապօրինի իրացման նպատակով նախապես ձեռք բերված ընդհանուր 0.2 գրամ քաշով «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց, ինչն

էլ հայտնաբերվել է 2021 թվականի հոկտեմբերի 7-ին կատարված դեպքի վայրի զննությամբ:

(…)

Բացի այդ, Վարդգես Զրիկյանը թմրամիջոցների իրացումից ստացված առանձնապես խոշոր չափերով ֆինանսական միջոցների՝ 53.479.443 ՀՀ դրամի, հանցավոր ծագումը, դրա իրական բնույթը թաքցնելու, հանցավոր ճանապարհով ստացված ֆինանսական միջոցների տեղաշարժն ու տեղաբաշխումը քողարկելու, ստացված դրամական միջոցներին օրինական տեսք հաղորդելու նպատակով նշված գումարները փոխանցել է տարբեր անձանց անուններով գրանցված, սակայն իր և կնոջ՝ Լիա Զրիկյանի կողմից փաստացի կառավարվող ինչպես օտարերկրյա, այնպես էլ ՀՀ-ում գրանցված տարատեսակ էլեկտրոնային դրամապանակներին, որից հետո նույն եղանակով դրանք փոխանցել է իր և կնոջ էլեկտրոնային դրամապանակներին, ինչպես նաև կանխիկացրել կամ այլ կերպ տնօրինել է դրանք:

Վարդգես Զրիկյանը 2019-2020թթ.. ընթացքում «Instagram» և «Telegram» հեռահաղորդակցման հավելվածներում ստեղծել և կառավարել է թմրամիջոցների վաճառքի իրականացման վերաբերյալ գովազդներ, պատկերներ և արժեքներ պարունակող համապատասխանաբար «Shoko.178», «Shoko 178» և գրեթե նույնանուն անհատական էջերը և դրանց միջոցով իրականացնելով թմրամիջոցների ապօրինի վաճառք՝ որպես թմրամիջոցը ստանալու համար համապատասխան գումարի փոխանցման հաշվեհամար նշել է Ռուսաստանի Դաշնության տարածքում գործող և այդ երկրի քաղաքացու անվամբ գրանցված, սակայն փաստացի իր կողմից ստեղծված և կառավարվող «Qiwi» համակարգի +79876607604 դրամապանակի, Վիգեն Հովհաննիսյանի անվամբ «Իդրամ» վճարահաշվարկային համակարգում նույնականացված, սակայն փաստացի իր կողմից կառավարվող 441636567, 127242790 և 599783767 համարների էլեկտրոնային դրամապանակների, ինչպես նաև իր և իր կնոջ՝ Լիա Զրիկյանի անվամբ նույն վճարահաշվարկային համակարգում նույնականացված էլեկտրոնային դրամապանակների տվյալներ:

Համացանցի վերը նշված հարթակների միջոցով իրականացված թմրամիջոցների ապօրինի վաճառքի արդյունքում «Qiwi» համակարգի +79876607604 դրամապանակին 12.11.2019թ. մինչ 24.04.2020թ. ընկած

ժամանակահատվածը փոխանցումների արդյունքում ստացվել է 2.326.898 ՌԴ ռուբլուն համարժեք 15.822.906 ՀՀ դրամ, որից ընդհանուրը՝ 2.020.337 ՌԴ ռուբլուն համարժեք 13.738.291 ՀՀ դրամը հետագայում առցանց փոխանցումների միջոցով փոխանցվել է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող «Իդրամ» վճարահաշվարկային համակարգում 094522725 հեռախոսահամարով նույնականացված և Վարդգես Զրիկյանի անունով նույնականացված 139966385 նույնացման համարի դրամապանակին և հետագայում կանխիկացվել Վարդգես Զրիկյանի կամ նրա ընտանիքի անդամների կողմից կամ փոխանցվել վերջիններիս հետ փոխկապակցված անձանց «Իդրամ» համակարգի հաշիվներին և տարբեր բանկային քարտերին:

Բացի այդ, Վարդգես և Լիա Զրիկյանները, թմրամիջոցների վաճառքի արդյունքում գումարների ստացման համար, 2019-2020 թվականների ընթացքում «Իդրամ» վճարահաշվարկային համակարգում իրենց անվամբ ստեղծել են թվով 32 դրամապանակներ, որոնք գործել են տարբեր հաջորդականությամբ: Մասնավորապես՝ 2019 թվականի օգոստոս-դեկտեմբեր ամիսներին Վարդգես Զրիկյանի կողմից տելեգրամյան ալիքի միջոցով իրացված թմրամիջոցի ձեռքբերման համար «Իդրամ» վճարահաշվարկային համակարգում վերջինիս անվամբ նույնականացված 224296207 համարի դրամապանակին միայն վճարային տերմինալներով կատարված փոխանցումներով ստացվել է 8.752.483 ՀՀ դրամ, որից 7.713.320 ՀՀ դրամը հետագայում կանխիկացվել է Վարդգես Զրիկյանի և Լիա Զրիկյանի կողմից:

Այնուհետև, 2020 թվականի մայիս-օգոստոս ամիսների ընթացքում թմրամիջոցների ապօրինի վաճառքի արդյունքում տարբեր անձանց կողմից ինչպես առցանց, այնպես էլ վճարային տերմինալներից կատարված փոխանցումներով Վիգեն Հովհաննիսյանի անվամբ նույնականացված և Վարդգես Զրիկյանի կողմից կառավարվող «Իդրամ» վճարահաշվարկային համակարգի 441636567 համարի դրամապանակին փոխանցվել է 35.230.365 ՀՀ դրամ գումար, որից 654.000 ՀՀ դրամը կանխիկացվել է վերջինիս կամ նրա կնոջ՝ Լիա Զրիկյանի կողմից, 31.995.686 ՀՀ դրամը փոխանցվել է նույն համակարգում Վարդգես Զրիկյանի անվամբ նույնականացված 176321218 համարի դրամապանակին, ինչից հետո 176321218

համարի դրամապանակին փոխանցված գումարներից 29.769.000 ՀՀ դրամը ևս կանխիկացվել է Վարդգես Զրիկյանի և Լիա Զրիկյանի կողմից կամ փոխանցվել տարբեր բանկային հաշիվների:

Բացի այդ, 2020 թվականի օգոստոս-հոկտեմբեր ամիսներին Վարդգես Զրիկյանի կողմից թմրամիջոցների վաճառքի արդյունքում գումարների ստացման համար սկսել է օգտագործվել կրկին Վիգեն Հովհաննիսյանի անվամբ նույնականացված և Վարդգես Զրիկյանի կողմից կառավարվող «Իդրամ» վճարահաշվարկային համակարգի 127242790 համարի դրամապանակը, որին կրկին տարաբնույթ փոխանցումներով ստացվել է 4.082.291 ՀՀ դրամ, որից 2.258.835 ՀՀ դրամը հետագայում փոխանցվել է նույն համակարգում Լիա Զրիկյանի անվամբ նույնականացված 702240564 համարի դրամապանակին, որից հետո վերոնշյալ դրամապանակին ստացված գումարներից 471.150 ՀՀ դրամը կանխիկացվել է Լիա Զրիկյանի և Վարդգես Զրիկյանի կողմից, 626.500 ՀՀ դրամը փոխանցվել է բանկային քարտերի, իսկ մյուս մասով կատարվել են առօրյա տարատեսակ վճարումներ կամ փոխանցումներ (…)»[1]*:*

5. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի մարտի 16-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ին ընդունված և 2024 թվականի փետրվարի 6-ին ուժի մեջ մտած ՀՕ-31-Ն ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի հավելված 1-ում «Հոդված 296. Փողերի լվացումը» բառերը փոխարինվել է «Հոդված 296. 3-րդ մաս, 2-րդ կետ. Փողերի լվացումը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով» բառերով, ինչի արդյունքում սույն գործով մեղադրյալ Վարդգես Զրիկյանին վերագրվող փողերի լվացումն այլևս չի հանդիսանում կոռուպցիոն հանցանք, ընդգրկված չի ՀՀ քրեական օրենսգրքի հավելված 1-ում, ուստի սույն քրեական գործն այլևս ընդդատյա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:*

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 8, թերթեր 41-45:

Վերը նշված հանգամանքները հաշվի առնելով՝ 2024 թվականի մարտի 16-ին՝ դատական նիստի ժամանակ, Դատարանը վարույթի մասնակիցների հետ քննարկելով գործի քննությունը ՀՀ հակակոռուպցիոն դատարանում շարունակելու հարցը.

Հանրային մեղադրողը հայտարարել է, որ չի առարկում, որպեսզի գործի քննությունը շարունակվի նույն դատարանում:

Մեղադրյալների պաշտպան Գարիկ Գալիկյանը հայտարարել է, որ Վարդգես Զրիկյանին և Լիա Զրիկյանին վերագրվող հանցանքները կոռուպցիոն չեն, հետևաբար Հակակոռուպցիոն դատարանն այլևս պատշաճ դատարան չէ, հետևաբար առարկում է, որպեսզի գործի քննությունը շարունակվի Հակակոռուպցիոն դատարանի կողմից:

Մեղադրյալներ Վարդգես Զրիկյանը և Լիա Զրիկյանը հայտարարել են, որ համաձայն են իրենց պաշտպանի հետ:

Մեղադրյալներ Վարդգես Զրիկյանին և Լիա Զրիկյանին վերագրվող ենթադրյալ հանցանքները կատարվել են Երևան քաղաքում:

Նկատի ունենալով, որ սույն գործով մեղադրյալները և նրանց պաշտպանն առարկել են վարույթը շարունակել ՀՀ հակակոռուպցիոն դատարանում, ուստի սույն քրեական գործն առարկայական և տարածքային ընդդատության կանոններին համապատասխան պետք է փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան (...)»[2]:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի ապրիլի 2-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) Դատարանը փաստում է, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանը գործն ըստ առարկայական ընդդատության ուղարկելու մասին որոշում չէր կարող կայացնել այն պատճառաբանությամբ, որ ընդդատության կանոնների պահպանմամբ վարույթ ընդունված քրեական գործի (հիշյալ քրեական գործով դատավոր՝ Վ.Դոլմազյանը 2023 թվականի ապրիլի 12-ին որոշում է կայացրել ՀԿԴ/0049/01/23 քրեական գործի վարույթը ստանձնելու և 2023 թվականի ապրիլի 20-ին նախնական դատաքննություններ*

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 10, թերթեր 197-201:

նշանակելու մասին) ընդդատությունը տվյալ դեպքում չի կարող փոխվել՝ ելնելով քրեական վարույթի ընթացքում հետագա օրենսդրական փոփոխություններից: Այսինքն՝ Դատարանը գտնում է, որ գործի քննության ընթացքում քրեական օրենսգրքի համապատասխան հավելվածում փոփոխությունների դեպքում վարույթները չպետք է փոխանցեն ըստ ընդդատության, քանի որ դրանք դատարանի կողմից ստանալու պահին եղել են ճիշտ ընտրված ընդդատությամբ, և կանխավարկածը պետք է լինի գործի քննության շարունակությունը տվյալ դատարանում, այլ ոչ թե այն ըստ ընդդատության փոխանցելը:

(…)

[ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի] վերլուծությունից ակնհայտ է, որ հոդվածի 1-ին մասը վերաբերում է նախնական դատալսումների փուլում այն դեպքերին, երբ դատարանը 1-ին անգամ քննարկում է քրեական վարույթի ընդդատության հարցը: Իսկ այն դեպքերում, երբ դատարանն արդեն իսկ արձանագրել է, որ վարույթն ընդդատյա է տվյալ դատարանին, կարող է վարույթն ըստ ընդդատության փոխանցել միայն նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում, այն է՝ եթե հիմնական դատալսումների ընթացքում ի հայտ են գալիս այնպիսի փաստեր, որոնց հիման վրա վարույթը ենթակա է փոխանցման ըստ ընդդատության:

Դատարանի գնահատմամբ՝ օրենսդրի նման ձևակերպումից ակնհայտ է դառնում, որ նշված կարգավորումը որևէ կերպ չի կարող միանշանակ վերաբերելի լինել այն դեպքերին, երբ քրեական օրենսգրքի համապատասխան հավելվածում փոփոխություն է կատարվում:

ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ին ընդունված և 2024 թվականի փետրվարի 6-ին ուժի մեջ մտած ՀՕ-31-Ն ՀՀ օրենքը չի նախատեսում անցումային դրույթ, ըստ որի դատարանների վարույթում գտնվող նախկին կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ վարույթները պետք է փոխանցվեն ըստ ընդդատության: Դատարանն ընդգծում է, որ ի տարբերություն օրենսդրության փոփոխության նախկին դեպքերի, երբ օրենսդիրն անցումային դրույթի ուժով կարգավորել էր գործերի փոխանցումը ՀՀ հակակոռուպցիոն դատարան, այս

դեպքում նման նորմ չի նախատեսել, ինչը հիմք է տալիս գալ հիմնավոր այն եզրահանգման, որ օրենսդրի կամքն եղել է հիշյալ քրեական վարույթների քննությունը գործը ստացած դատարանում մնալը: Հակառակ դեպքում հնարավոր է ստեղծվի մի իրավիճակ, երբ տարբեր ժամանակներում իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում քրեական գործը կհայտնվի անվերջ «շրջապտույտի» մեջ: Օրինակ՝ դատարանում ավարտական փուլում (դատական վիճաբանություններ կամ եզրափակիչ ելույթներ) գտնվող քրեական գործը զուտ օրենսդրական փոփոխություններից ելնելով առարկայական ընդդատությամբ ուղարկվի այլ դատարան, իսկ որոշ ժամանակ անց՝ նույն հիմնավորումներով վերադարձվի այն ուղարկած դատարան:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ Դատարանը վերահաստատում է իր մոտեցումը, որ առարկայական ընդդատության ենթակա գործերի ցանկում փոփոխության դեպքում գործում է ճիշտ ընդդատությամբ գործը ստացած դատարանի կողմից գործի քննությունը շարունակելու կանխավարկածը, եթե այլ բան նախատեսված չէ ընդունված նոր օրենքով:

Ավելին՝

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 483-րդ հոդվածի 23-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների բացառության մասով, 261-րդ հոդվածի 7-րդ մասի և 262-րդ հոդվածի 2-րդ մասի ուժի մեջ մտնելով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ գործերի (վարույթների) վերաքաշիումն իրականացվում է ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-331-Ն սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածով սահմանված կարգով և դեպքերում:

««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-331-Ն սահմանադրական օրենքի անցումային դրույթները

սահմանող 19-րդ հոդվածի 24-րդ մասը սահմանում է. «Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող՝ սույն մասով նախատեսված գործերը ենթակա չեն վերաբաշխման հակակոռուպցիոն դատարանին, եթե տվյալ գործով անցում է կատարվել դատաքննության փուլ:»:

Դատարանն արձանագրում է, որ թեև մեջբերված հոդվածների վերլուծությունից ակնհայտ է, որ դրանք վերաբերում են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող կոռուպցիոն բնույթի քրեական գործերի վերաբաշխմանը, սակայն ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ օրենքը հստակ սահմանել է, որ այն քրեական գործերը, որոնցով անցում է կատարվել դատաքննության փուլ, ենթակա չէ վերաբաշխման: Նույն տրամաբանությամբ, հակակոռուպցիոն դատարանում գտնվող քրեական գործերը, որոնցում անցում է կատարվել դատաքննության փուլ չի կարող վերաբաշխվել և փոխանցվել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Հարկ է փաստել նաև, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում գտնվող բազմաթիվ կոռուպցիոն բնույթի քրեական գործեր դատաքննության փուլ անցած լինելու հիմնավորումներով չեն փոխանցվել ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

Դատարանը փաստում է, որ թիվ ՀԿԴ/0049/01/23 քրեական գործով ՀՀ հակակոռուպցիոն Դատարանը անցում է կատարել հիմնական դատաքննության փուլ (հիմքը՝ 2023 թվականի օգոստոսի 14-ի որոշում հիմնական դատաքննություն նշանակելու մասին՝ հատոր 9-րդ, գ.թ. 145), և ՀՀ հակակոռուպցիոն դատարանը չի հիմնավորել, որ հիմնական դատաքննության ընթացքում ի հայտ են եկել այնպիսի փաստեր (ինչպես արդեն հիմնավորվել է՝ տվյալ պարագայում քրեական վարույթի ընթացքում օրենսդրական փոփոխությունը չի կարող նշված նորմի իմաստով համարվել ընդդատությունը փոխելու համար հիմք հանդիսացող փաստի ի հայտ գալ), որոնց հիման վրա վարույթը ենթակա է փոխանցման ըստ ընդդատության:

Հետևաբար, Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում առարկայական ընդդատության կանոններով քրեական գործը ՀՀ հակակոռուպցիոն դատարանը չէր

կարող փոխանցել առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան (…)»[3]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/0591/01/24 (ՀԿԴ/0049/01/23) քրեական վարույթը ենթակա չէր փոխանցման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ*

---

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 10, թերթեր 217-222:

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»[5]:

10. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]:

11. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել՝ իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցելիս, չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, և պետք է հաշվի առնվի նաև արդարադատության շահը:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատալսումների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

12.1. «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ի թիվ ՀՕ-31-Ն ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ *«Օրենսգրքի հավելված N 1-ում՝*

*1) **«Հոդված 296. Փողերի լվացումը»** բառերը փոխարինել **«Հոդված 296. 3-րդ մաս, 2-րդ կետ. Փողերի լվացումը՝** իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով» բառերով (…)»:*

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 23-րդ և 24-րդ մասերի համաձայն՝ *«23. (…) Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ենթակա (…) կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը վերաբաշխվում են հակակոռուպցիոն դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորների միջև, բացառությամբ սույն հոդվածի 24-րդ մասով սահմանված դեպքի:*

24. Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող՝ սույն մասով նախատեսված գործերը ենթակա չեն վերաբաշխման հակակոռուպցիոն դատարանին, եթե տվյալ գործով անցում է կատարվել դատաքննության փուլ»:

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված ՀՕ-333-Ն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Սույն օրենքն*

ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը վերաբաշխվում են հակակոռուպցիոն դատարանի դատավորների միջև, եթե տվյալ գործերով անցում չի կատարվել դատաքննության փուլ»:

12.2. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե օրենսդրության մեջ բացակայում է կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմը, սակայն օրենսդրությամբ սահմանված է համանման հարաբերությունները կարգավորող այլ իրավական նորմ, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ (եթե դա չի հակասում դրանց էությանը) կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող իրավական նորմերը (օրենքի անալոգիա): (...):*

3. Օրենքի կամ իրավունքի անալոգիա չի կարող կիրառվել, եթե դրանով սահմանափակվում են անձանց իրավունքները, ազատությունները, կամ նրանց համար նախատեսվում է նոր պարտականություն կամ պատասխանատվություն, կամ խստացվում են նրանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության, հարկադրանքի միջոցները կամ դրանց կիրառման կարգը, հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարման կարգը, անձանց գործունեության նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն իրականացնելու պայմանները և կարգը:

4. Օրենքի անալոգիան և իրավունքի անալոգիան կարող են կիրառվել միայն, եթե տվյալ օրենքով չի արգելվում անալոգիայի կիրառումը»:

13. Նշված նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16–ին ընդունված ՀՕ-31-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխության արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի (համապատասխանում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածին) 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետով նախատեսված արարքներն այլևս չեն հանդիսանում կոռուպցիոն բնույթի հանցանքներ և ընդգրկված չեն ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ում, հետևաբար դրա վերաբերյալ վարույթներն ընդդատյա են առաջին ատյանի ընդհանուր

իրավասության դատարանին: Սակայն, կատարված փոփոխությամբ որևէ կարգավորում չի սահմանվել առ այն, թե արդյո՞ք այդ փոփոխությունը պետք է տարածվի Հակակոռուպցիոն դատարանում դատաքննության փուլում գտնվող նմանատիպ վարույթների վրա, այլ կերպ՝ արդյո՞ք այդ վարույթները ենթակա են վերաբաշխման, թե ոչ:

Այդուհանդերձ, դեռևս 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 23-րդ և 24-րդ մասերով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված ՀՕ-333-Ն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ այն գործերը, որոնցով **անցում է կատարվել դատաքննության փուլ, ենթակա չեն վերաբաշխման հակակոռուպցիոն դատարանին:** Այսինքն, ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-333-Ն օրենքով լուծում է տրվել համանման իրավահարաբերությանը, ըստ որի՝ դատաքննության փուլ անցում կատարված լինելու դեպքում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող վարույթի փոխանցումը Հակակոռուպցիոն դատարան իրավաչափ չէ:

13.1. Հաշվի առնելով, որ ինչպես «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չեն արգելում անալոգիայի կիրառումը, ինչպես նաև այն, որ տվյալ պարագայում անալոգիայի կիրառումն անձանց իրավունքները, ազատությունները չի սահմանափակում կամ նրանց համար նոր պարտականություն կամ պատասխանատվություն չի նախատեսում՝ գտնում ենք, որ Հակակոռուպցիոն

դատարանների վարույթում գտնվող՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ի թիվ ՀՕ-31-Ն ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի հիման վրա առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա վարույթների վերաբաշխման հարցը պետք է լուծվի ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն օրենքի 19-րդ հոդվածի 23-րդ և 24-րդ մասերին և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-333-Ն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասին համահունչ: Այլ կերպ՝ այն վարույթները, որոնցով Հակակոռուպցիոն դատարանն անցում է կատարել դատաքննության (հիմնական դատալսումների) փուլ, ենթակա չեն վերաբաշխման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի օգոստոսի 14-ին կայացած դատական նիստի ընթացքում անցում է կատարել հիմնական դատալսումների փուլ[7]:

- Հակակոռուպցիոն դատարանը որոշում է կայացրել վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին՝ փաստելով, որ համաձայն «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ի թիվ ՀՕ-31-Ն ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի՝ մեղադրյալ Վարդգես Զրիկյանին վերագրվող փողերի լվացումն այլևս չի հանդիսանում կոռուպցիոն բնույթի հանցանք[8]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանն արձանագրել է, որ Հակակոռուպցիոն դատարանը գործն ըստ առարկայական ընդդատության ուղարկելու մասին որոշում չէր կարող կայացնել, քանի որ ընդդատության կանոնների պահպանմամբ վարույթ ընդունված քրեական գործի ընդդատությունը չի կարող փոխվել՝ ելնելով քրեական վարույթի ընթացքում հետագա օրենսդրական փոփոխություններից:

---

[7] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 9, թերթեր 149:
[8] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

Միաժամանակ արձանագրելով, որ թիվ ՀԿԴ/0049/01/23 քրեական գործով Հակակոռուպցիոն դատարանն անցում է կատարել հիմնական դատալսումների փուլ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը գտել է, որ քրեական գործը ենթակա չէր փոխանցման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան[9]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքով և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-333-Ն օրենքով նախատեսված իրավակարգավորումների լույսի ներքո, թիվ ԵԴ1/0591/01/24 (ՀԿԴ/0049/01/23) քրեական վարույթը ենթակա չէր վերաբաշխման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, քանի որ սույն վարույթով Հակակոռուպցիոն դատարանն անցում է կատարել հիմնական դատալսումների փուլ:

16. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/0591/01/24 (ՀԿԴ/0049/01/23) քրեական վարույթը ենթակա չէր փոխանցման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, հիմնավոր է:

17. Միաժամանակ հարկ է արձանագրել, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի այն դատողությունը, որ ընդդատության կանոնների պահպանմամբ վարույթ ընդունված քրեական գործի ընդդատությունը չի կարող փոխվել՝ ելնելով քրեական վարույթի ընթացքում հետագա օրենսդրական փոփոխություններից, ընդունելի չէ:

18. Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև, ելնելով արդարադատության շահի պաշտպանության և վարույթի արդարացիության ապահովման՝ ողջամիտ

[9] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

ժամկետում քննության անհրաժեշտությունից, գտնում ենք, որ թիվ ԵԴ1/0591/01/24 (ՀԿԴ/0049/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Վարդգես Հայկի Չրիկյանի վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 190-րդ հոդվածի հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և Լիա Ռուստամի Չրիկյանի վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ ԵԴ1/0591/01/24 (ՀԿԴ/0049/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ